

# Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

/ նիստը կայացել է 2021թ. հուլիսի 7-ին/

Նիստին մասնակցում էին մանկորհրդի 38 անդամները:

Օրակարգում՝

1. Օրակարգի հարցերի հաստատում:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

2. Նախորդ մանկկորհի որոշումների կատարման արդյունքների մասին:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

3. Վերաքննությունների մասին:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

4. Տարրական դպրոցի 2020-2021 ուստարվա ավարտական դասարանում գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփում, ինչպես նաև բոլոր ուսումնական առարկաներից տարեկան դրական գնահատականներ ստացած աշակերտներին հավաստագրեր տալու մասին:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

5. Հիմնական դպրոցի 2020-2021 ուստարվա ավարտական քննությունների արդյունքների ամփոփում, ինչպես նաև բոլոր ուսումնական առարկաներից տարեկան դրական գնահատականներ ստացած աշակերտներին հիմնական կրթության ավարտական վկայականներ տալու մասին:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

6. Տնօրենի ժ/պ-ի, տնօրենի ուսումնական և ՄԿԱ գծով փոխտնօրենների, ՄԴԱԿ-ի, մ/մ նախագահների, դասղեկների, գրադանավարի, ուսուցչի օգնականների, աջակցող թիմի, զինղեկի և լաբորանտի հաշվետվությունները՝ կատարած աշխատանքների մասին:

/զեկ.՝ տնօրեն, փոխտնօրեններ, ՄԴԱԿ, լեզուների, բնագիտամաթեմատիկական, պատմամշակութային, տարրական մ/մ նախագահներ, գրադարանավար, լաբորանտ, զինղեկ, ուսուցչի օգնականներ/

7. Մ/մ նախագահների միջնորդությունների քննարկում՝ դպրոցական պարտադիր ժամերի բաշխման վերաբերյալ:

/զեկ.՝ մ/մ նախագահներ/

8. 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլան-ծրագրի հաստատման մասին:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

9. 2021-2022 ուսումնական տարվա կրթադաստիարակչական պլան-ծրագրի հաստատման մասին:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

10. Մանկավարժական աշխատողների ուսումնական ծանրաբեռնվածության, ուսումնական տարվա աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության սահմանում:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան /

11. Մանկավարժական ընթերցում:

/զեկ.՝ Ն.Սարիբեկյան /

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 -Ա/2 հրամանի հավելվածները, մանկավարժական խորհուրդը

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

4-րդ դասարանի աշակերտներ՝ Կալդրիկյան Դավիթի և Տոնոյան Մարիի քննությունների հանձնումը կազմակերպել օգոստոսի 20- ից 30-ը:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 -Ա/2 հրամանի հավելվածները, մանկավարժական խորհուրդը

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

2020-2021 ուստարվա տարրական դպրոցի 4-րդ դասարանում սովորող, բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և գիտելիքների ստուգումից դրական գնահատականներ ստացած թվով 32 /երեսուներկու/ ներքոհիշյալ աշակերտներին փոխադրել 5-րդ դասարան :

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2021թ մայիսի 18-ի N785 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտների փոխադրման, ավարտման և հաջորդ դասարան, կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը», մանկավարժական խորհուրդը

### **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

5.1 9-րդ դասարանի բոլոր ուսումնական առարկաներից տարեկան և ավարտական քննություններից դրական գնահատականներ ստացած 28 /քսանութ/ աշակերտներին տալ հիմնական կրթության վկայական և ազատել դպրոցի աշակերտների համակազմից:

5.2 8-րդ և 9-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից տարեկան և քննական գերազանց գնահատականներ ստացած 3 /երեք/ աշակերտի՝ Վարդանյան Անուշ Կարոի, Բաղդասարյան Միլենա Վանիկի, Բիչախյան Սուրեն Վարդանի տալ հատուկ նմուշի հիմնական կրթության վկայական:

Հիմք ընդունելով ներկայացված հաշվետվությունները և արտահայտվողների կարծիքերը, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Տնօրենի ժ/պ-ի, ուսումնական, ՄԿԱ գծով փոխտնօրենների, գրադարանավարի, լեզուների, բնագիտամաթեմատիկական, պատմամշակութային, տարրական մ/մ նախագահների, ՄԴԱԿ-ի, ուսուցչի օգնականների, լաբորանտի և աջակցող թիմի 2020-2021 ուստարում կատարած աշխատանքները համարել բավարար և ներկայացնել կառավարման խորհրդի հաստատմանը:/հաշվետվությունները կցվում են/

Հիմք ընդունելով մ/մ նիստերի որոշումները և մ/մ նախագահների միջնորդությունը, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Դպրոցական բաղադրիչի բաշխման ժամանակ նախապատվությունը տալ մ/մ նախագահների կողմից առաջարկված բնագավառներին՝ ֆրանսերեն /5-9-րդ դաս./, անգլերեն /5 դաս./, հայոց պատմություն /6-9 դաս./, մաթեմատիկա /4 դաս./ և աշխարհագրություն /6-9-րդ դաս./ առարկաներին:

Հիմք ընդունելով տնօրենի ժ/պ-ի կողմից առաջարկված ուսումնադաստիարակչական պլան-ծրագրի նախագիծը, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հավանություն տալ 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական պլան-ծրագրին:

Հիմք ընդունելով տնօրենի ժ/պ –ի կողմից ներկայացված կրթադաստիարակչական զարգացման պլան-ծրագրի նախագիծը:

Մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հավանություն տալ 2021-2022 ուստարվա կրթադաստիարակչական պլան-ծրագրին:

Ղեկավարվելով վերադասի հանձնարարականով և ելնելով հաստատության առանձնահատկություններից, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

ա/ 2021-2022 ուստարվա պարապմունքներն անցկացնել հնգօրյա շաբաթական ծանրաբեռնվածությամբ  
բ/ դասերն սկսել առավոտյան ժամը 8:30-ին:

Ժողովի նախագահ՝

Ն.Մխիթարյան

Քարտուղար՝

Վ.Թադևոսյան